Գրիգոր Զոհրապ

Անծանոթը

Փողոցին մեջ կերթար, կարծես կը սահեր,
Հուշիկ քայլով, դանդաղ, գրեթե շփացող,
Դեմքը կազե լաչակի մեջ կը պահեր,
Պատմուճան մը ուներ հովեն ծըփացող:

Աղվո՞ր, տգե՞ղ, ինչ փույթ. բավեց որ մտքես
Մարմին մը տամ ես ուզածիս պես իրեն,
Վրդովիչ հով, պչրանք մը լուռ, վերջապես
Ամեն բաներն որոնց համար կը սիրեն:

Ու տարիներ սրտիս խորքը ջանացի
Պահել զինքը մասունքի պես, և մե՛կուն
Չըսի անոր հրապույրները կանացի
Որ գիշերներս ըրին խռոված և անքուն:

Ի՞նչպես եղավ, ո՛վ երազի ծնունդ կին,
Որ ըստուգիվ մարմին առած, խրոխտ ու վեհ,
Դեռ անցյալ օր թատրոնի մը հոծ մուտքին՝
Չճանչցողի մը պես ամցար իմ քովես:

1900